

1864.

2 Յունիսի

բառ հին տոմարի :

Թիի 14.


Ա. Վ. Երևանի Գործարարական Փոխադրամասնական

1864.

14 Յունիսի

բառ նոր տոմարի :

Registered at the General Post-Office for transmission abroad.



ԼՐԱԳԻՐ ՄԱՆՁԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱՅԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ :

Հրատարակիչ, հրատարակչության է-բաժանարար-
բեան գրատնային է Մանուկյան :

— Մանուկյան, յոգաւոր, գիրք է-պահանջ (պատկեր է-
տառ, գործարար) — պատկեր յանաւ Առաջին Կարգի Վ.
Շահապետյան, գիրք է-պատկեր :

M. le Chevalier K. Vardapete Shahmazariantz.
151, Rumpfod' Street, Manchester, (Angleterre.)



Տարեկան գին հանդիման ծախսով գործարար, — Երևան
Առաջին է-Պատկերային գրատնային է-պատկերային է 25 լ. է :

— Մանուկյան զարգացի ծախսով առաջին
Երայ է :

— Վեցամսեան 13 ,,

— Երեքամսեան 7 ,,

— Մեկ երեքին գին է Մանուկյան է 5

այլ-ը 7

— Բաժանարար գիրք է-պատկերային է-պատկերային է :

Ստորագրութեան տեղիքն են Կոտայնոստայի Սարգիս Աղայ Մ. Հիարեանի սենեակն է Ղալաթա . — Իզմիր Մարկոսեան Յակոբ
Աղայի սենեակն . — Հալեպ Յովհաննէս Աղայ Բարձրեանովի սենեակն . — Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակն .
— Աղերսանդրիա (Եղիպտոս) Տէր Գասպարեան Ղալաթոս Աղայի սենեակն . — Կալկաթա Սրբաւորն Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Խաչկեանի
և Աստուծոյ սենեակն . — Բաթալիա Պ. Մանուկ Ղալաթոսեանի սենեակն . — Լոնդոն Աղայ Մարտիրոսի սենեակն . — Փարիս Աղայ Պօղոս Սրբա-
յանի սենեակն : Առ այժմ ուղղորդներն կրնան վերոյգրեալ սենեակայ մէկէն ստանալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատուի բազմապէս և ըն-
թերցասէր բազարներ :

Ի ՈՎԱՆ ԳՐԱԿԱՆ ԹԻՒՆ :

Աղա . — Տեղեւոր . — Բաժանարար . — Պատկեր . —
Թեւեւ . — Տեղեւոր . — Առաջին . — Իզմիր . — Առաջին . —
Բաժանարար . — Վեցամսեան . — Երեքամսեան . — Առաջին . —

Ա. Ձ. Գ.

Պ. Յրեղէր Անգլիացի մեծահարուստ և համ-
բաւարար վաճառականն Մանուկեանի, որ Պօլսի
և Իզմիրի աղբային վաճառականներն շատերուն
ծանօթ է և շատերու հետ ալ շահաւոր և պատուա-
ւոր կերպիւ անուանուի ըրերէ և կրնէ ալ ալ ևս,
հաճեցաւ, Երկրագործի գործարար և հաստա-
տութեան համար, ոչ միայն բան օրինակի բա-
ժանարար գրութիւն, այլ և տունտնային բաժանակի
և կտուրեղիկայ յօդուածն ինքն գրել, ամենաճիշդ
գիններն ինքն տալ և իր արդարութեամբ վաճա-
րային :

Առիկա պատկեր ոչ միայն Երկրագործի, որ
հազիւ իր գոյութեան շարքի միմեկն կրնայ, այլ
ևս Հալ Պատկերային Հրատարակչութեան, որ Ման-
կայան, պատկեր, ինչ որ, այլ :

չեստերի մէջ առաջին աղբային տպարան ունե-
ւորով, ունի նաև աղբային և ազատ լրագիր,
որոյ միակ նպատակն է ազգի բարին, և որ պատ-
րաստ է միշտ արձանագործել ազգի շահուն դէմ
եղած անիրաւութեանց և ազգի շահուն համար
եղած բարեբարութեանց :

Աղբային շահն կատարէ մեզ քարոզել մեր
Պատուի ընթերցողաց վաճառականութիւն և
Անգլիոյ հետ վաճառականութիւն, որ տիեզերաց
համարն և մատակարարն ըլլալէն զատ, է միայն
գամայն և ուժեղ միջոց բազարակրթութեան,
լուստարութեան, ազատութեան և զօրութեան :
Մանուկեանի վաճառականներէն Պ. Բրուքս 4-5
օր առաջ մեկնելով մէկ միլիոն ութ հարիւր հազար
լիւրայի հարստութիւն ձգեց իր ժառանգներուն, և
որ աւելի զարմանալին է, այսչափ հարստութիւն
իր վաստակն էր և 50 տարիի մէջ վաստակած :
Մակայն վաճառականութիւն ըսելով առաջին
չեմ ուղեր ըսել և ոչ 5 փարայով գնածն 6
փարայի վաճառէն, ոչ, ասիկա մանրավաճառներու
դործ է, ասիկա խանութ պանութիւն է : Ճամարիտ
վաճառական ըլլալու համար մեր ազգն շատ յատ-
կութիւններ ունի, այն է չափաւորութիւն, լրջ-
մասութիւն, աշխատասիրութիւն, համբերութիւն,
սակայն, կատարեալ ըլլալու համար, անորմէ
տակալին բանի մի յատկութիւններ կապակին,
այն է կատարեալ դատարարականութիւն և առե-
տրական հրահանգ. վասնզի վաճառականութիւնն
ինքնին, քերականութեան կամ այլ արհեստից

պէս գիտութիւն է : Թողում ըսել նաև միւսնա-
կան հոգի, իրարու ձեռնառութիւն, իրարու
վերայ վատահոլութիւն և իրարու վերայ հաւատար-
մութիւն, որ վաճառականութեան կենսական
տարրերէն, կրնամ ըսել, առաջինն է :

Մէկ գիւղի հասարակութեան մէջ զժողովին է 50
կամ 100 հոգի գտնել, որ ամեն մէկն, 50 կամ 100
լիւրա ունենայ. սակայն մէկ կամ տասնմէկ լիւրա
ունեցողներ շատ կգտնուին այն 50 կամ 100 ան-
ձերուն մէջ : Արդ գիտէ՞ք ինչ կըլլայ եթէ մեր
ազգի անդամներն, իրարու վերայ վատահոլութիւն
և հաւատարմութիւն յղանալով, նոյն 100 անձներն
մի մի կամ տասն տասն լիւրա մէկ տեղ ժողովելով
ընկերութիւն հաստատեն և դործ գործեն : Ստոր
արդիւնքն այն կըլլայ, որ 100 մարդոց մի կամ 11
լիւրայով զատաբար չկրցած ըրածն մէկ ընկերու-
թիւն 100 կամ 1100 լիւրայով հեշտութեամբ կընէ,
և երբեմն ալ օ/օ 15 և մինչև 25 շահ կըբերէ :
Որչափ ճամարիտ է «միարանութիւնն» է մայր
ամենայն բարեաց» խօսքն, որ, արդարեւ, որ ազգի
մէջ որ մտաւ, այն ազգն 25 կամ 50 տարուան
մէջ կերպարանաւորի ըրաւ : Վասնզի մինչեւ
Պօլսի մեր Մեծապատիւ սեղանաւորներն 50 և 70
տարի իրենց տոմարներն գերջով օրմանելով
մերկ աշխարհ կհաճնուն պէս, մերկ ալ իրենց
օտային տուն կըառնային որպէսզի իրենց ծերու-
թիւնն ցաւօք և հեծութեամբ անցունեն, ընդհա-
կառակն, Երրորդի և Ամերիկայի սեղանաւոր-
ներն ընկերութիւններ հաստատելով, ունեցած

անհատական զբաղմունք մեկ տեղ բերելով՝ երկու թուղիներու, չորեքանակու, վաճառականութեան, ձեռակերտութեան եւ այլն, եւ այլն, եւ այլն ընկերութիւններ կհաստատելին, եւ զոչն աշխատութեամբ տիեզերաց ճոխութիւնն իրենց երկիրներն կրաչէին. մինչդեռ, կրսեմ Եւրոպայի եւ Ասիայ փառամով թագաւորներն զօրաց եւ թնդանօթաց, սուրին եւ պատերազմական նաւուց թիւն շատցունելով եւ մարդկային ազգի գերութեան շղթան ամեն օր ծանրցունելով իրենց աշխրհայ ծիրանիւրով մէկ տեղ պարտքի մօրին մէջ կթաղուէին, ընկերութիւններն՝ առանց զօրքի եւ թնդանօթի, առանց սուրին եւ պատերազմական նաւի, չորին եւ ձեռակերտութիւնն կատարելագործելով շանթերն կրանէին, ծովու ալեաց մէջ իրենց նաւերու անխնայութեամբ կրանային, լեռներն կհարթէին կամ կծակէին եւ առատութիւն, լիութիւն եւ գանձ իրենց երկրացոց կրաչէին: Ինչ որ ըսինք սակայն մեր կարգացածի եւ տեսածի հարկերը մասն է:

Առդ հրաւէր կկարգամ մեր ընթերցողաց ընկերութեան եւ միաբանական գործառնութեանց մտադիր ըլլալ: Գիտեմ՝ եւ հաստատիմ թէ՛ դեռ 25 տարի չանցած՝ մեր հասարակութեան մէջ յիսնաւոր եւ հարիւրաւոր ընկերութիւններ ծաղկելու են. բայց գուցէ այն ատենի շահն նոյն չըլլայ, որ ինչ կարելի է յուսալ այժմ: Մինչ այն վայր գուցէ Եւրոպայիք ամեն շահաւոր գործերն ձեռունին անցունեն եւ մերայնոց խանութպանութիւն եւ բեռնակրութիւն միայն թողուն, սակայն այժմ եթէ մերիններն խորհելով, հնարելով եւ ընտրելով վարուն եւ ոչ թէ Հնդկաց կատարող օրինակին եւ իրենց նախնի նախապաշարմանց հետեւելով, դեռ ժամանակ կայ: Վաճառականութիւն կրարողք մեր ազգին. այլ ընկերութեամբ եւ ուսմամբ: Մանչեատեր արդէն բաւական ազգային պատուաւոր տուններ կան, որոց անուններն ընդ վոյթ կհրատարակեմք: Մեր հեռաւոր ազգայիններն կրնան անոնցմէ մէկուն կամ մէկալին հետ գործ տեսնել, ազգային շահն ազգին մէջ սրահել. իսկ եթէ կան այնպիսի անձինք, որք Անգլիացոց հետ գործ ընել կարեն, անոնց կցցնեմք Պ. Ֆրեդերի տունն:

— Այս առթիւ Երկրագունդի խմբագիրն քաղցր պարտք կհամարի իրեն իր ջերմ շնորհակալութիւնն մատուցանել իր Ռաուսիական եւ Բարեջան հայրենակից եւ բարեկամ Աղայ Մարտիրոսի թօխատեան պատուաւոր վաճառականին, որ հաճեցաւ ոչ միայն զմեզ Պ. Ֆրեդերին ծանօթացնել, այլեւ յանձն հառ անոր անդիւրեղ գրելիք առեւտրական յօդուածն հայերէնի թարգմանել եւ սրական լեցունել:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Լանդոնի Խորհրդակցութեան նիստերն իրարու կցօնարկեն. այլ իրարու չեն նմանիր: Զինադուքարն, որ ամսոյս 12ին կլմնար այլ եւս 15 օր երկնայա՝ կհաստատեն ամեն թերթեր: Դանմարգ, խաղաղութիւն ստանալու համար, Հոլլանդի եւ Լաւերսարդի դքսութիւններէն, եւս եւ Ելեզվիի հարաւային մասէն հրաժարելու երե-

ւոյթներ կցցնէ: Անգլիա, կրսեն, մի եւ նոյն բանն առաջարկելէ եւ աւելցուցեր որ Կիւեւ ազատ նաւահանգիստ ըլլայ, եւ Ռենդսբուրգ Գիետի բերդ չըլլայ, եւ թէ սահմանն Շվեյ եւ Գանձիրդ ըլլան, զոր եւ Ֆրանսա ընդունելէ: Այն դաւաճներու, որոց բնակիչներն ամբողջապէս Գերմանայի են կամ Դան, բուէ տալու հարկ չկայ ամենեւին. այլ հոն, ուր Գերմանացի եւ Դան խառն կրնակին, վիճակ ձգելու առաջարկութիւն եղեր է: Ասոր համար ալ կլուի թէ գերմանական չօրքն Շվեյլիք պարպելուն որպէս զի ժողովուրդն ազատօրէն բուէ տայ ոչ միայն Դանմարգի կամ Գերմանիոյ անդամ ըլլալու այլ եւ իր ուզած վարչութեան կերպն եւ իշխանն ընտրելու համար:

— Յեղուխոններն, բանի մի անդամ Գերմանիայէն հաղածուէն յետոյ, անամօթ ճանճու պէս, դարձեալ հոն մտնելու փորձ ըրին, որպէսզի հոգեւոր եւ մտաւոր խաւարն հոն ալ տարածեն. սակայն Գերմանիա, որ ժամտաթ զենիի պոռուզն արդէն ճաշակելէ, զգաստութեամբ կհսկէ եւ Յեղուխոց որոգայթն միւսանգամ իյնալէ կզդուշանայ: Ասոր օրինակն տեսնուեցաւ Մայեանս բաղարին մէջ, որ Յեղուխոց հոն հաստատուին տեսնելով բողոքեց: Հետեւաբար երեսփոխանաց Խորհրդարանն վճռեց յիշեալ բողոքն Տերութեան խրկել եւ հրաւիրել որ Յեղուխոց միաբանութիւնն ցրուէ, անոնց հրամայէ՝ որ Մայեանի Սուրբ Բրիտոֆի երկայարանէն դուրս ելլեն եւ անոնց արդիւք որ ոչ ինչ եկեղեցական պաշտօն չկատարեն: Ծանուցումն լիցի Օսմանեան կայսերութեան իմաստուն նախարարներուն, որք իրենց երկրի քրիստոնէաց հպատակաց մեծ բարիք ըրած կըլլան եթէ այն ինքնակոչ հիւրերն մի եւ նոյն ձեով անկէ վարեն:

— Ֆրանսայի եւ Անգլիոյ փոփոխակի նախանձորդութիւններն, երեւ թէ, վերջացեր են Սուէրի ջրանցքի եւ Եփրատի երկաթ ուղիի մասին: Ֆրանսա չինէ պիտի անխուով Կարսի եւ Միջերկրեայ ծովերն կցող ջրանցքն. եւ Անգլիա, կէս ջրային, կէս ցամաքային ճամբայ պիտի բանայ Եփրատի վրայով Հնդկաստան երթեկութիւն ընելու համար:

— Անցեալներն սրբազան Պապն բողոքերէր Ռուսիոյ դէմ Լեհաստանի ապստամբութիւնն զսպելու պատճառաւ, եւ կաթողիկոսութիւնն ջնջելու մեղադրութիւնն Ալեքսանդր Բ. վերայ բեռցնելով: Եւրոպիոյ բոլոր լրագիրներն հոռուական եւ ոչ հոռուական, ամենն ալ, հրատարակեցին յիշեալ բողոքն, որու դէմ բողոքեց Ռուսիոյ Հոռոմ նստող Գործակալն (դեսպանն տալիս Փարիս) եւ բացատրութիւն խնդրեց կարդինալ Անտոնեյլլէն: Բաւական ժամանակ անցնելէն զինի, Պապի արտաքին գործոց պաշտօնեայն պատասխանեց թէ լրագրոց հրատարակած բողոքն անվաւեր էր, (թէս պարտական էր, եթէ այն այնպէս էր, առաջունէ անոր անվաւերութիւնն հաստատել) եւ թէ Յեղուխոց ձեռքով հրատարակած Ժիորնալ Դի Ռոմայի գրածն միայն ընդունելի: Ինչ եւ իցէ, Պապի արտաքին գործոց պաշտօնէի տուած բացատրութիւնն անբաւական երեցաւ Ռուսաց կառավարութեանն, որ հրամայեց իր գործակալին ամեն քաղաքական հաղորդակցութիւն կտրել Հոռոմայ արքունեաց հետ:

— Գրոսմո հիւսիսային սարապաւտն, յուշիկ, այլ քայլ առ քայլ յառաջ կերթայ դէպի Ռիշմոնդ, որու պարսպի տուէ կամ մօտերն, հաւանակա-

նաբար, արիւնահեղ ձակաւորներէն մէկն տրուի պիտի, որով զժախտաբար շատ ճոխ են արդէն տիեզերաց զինուորական տարեգիրներն: Նա բազմաձեռն օգնութիւն ստանալէն յետոյ, իր ընթացքն շարունակեց, կրսեն Նիւ Եօրկէն անցեալ ամսեան 28ին գրած նամակներն, եւ Ռիշմոնդի հասնելու 12 միլիոնացիէ, որ եւ Ֆրեդերիկս, բուրգէն եւ Սքիլայէն իր բանակն Ուրբանա փոխադրեց: Բըռլերի երկու սեւակորթ գունդերն Հարաւայնոց ձիաւորներուն բաւական ծանր ծեծ տուին. սակայն անոր զօրաբաժինն, կրսեն թէ. յաղթուելէ: Երանան Ատլանտայի մէջ ուժգնութեամբ յառաջ կրաչէ. եւ Ալլատունի Հարաւայնոց բանակն հարկերէ որ անկէ տեղափոխին: Ուրիշ մէկ լուր կծանուցանէ թէ Գեովիա նախագահն հրաւիրելէ Ռիշմոնդի բնակիչներն քաղաքն սարսափել: Բանքս զօրավարն իր ձախորդութենէն ետեւ կրցաւ Նիւ Օրլէանս հասնել եւ իր զօրաց մնացորդն ազատել: Հիւսիսայիններն Տեխաս պարպեցին:

— Ստարի (լրագիր) թղթակիցն կհաւատտէ թէ Ավստրիոյ կայսրն եւ կայսրուհին, Ռուսիոյ կայսրն եւ կայսրուհին, Պրուսիոյ թագաւորն եւ թագուհին Հագ (Պրուսիա) պիտի ժողլին, ուր գնալու են կյաւելու, նոյնպէս Ֆրանսայի կայսրն եւ կայսրուհին, որոց տեսութեան եւ համախմբութեան շարժառիթն հարկաւ, լոկ քաղաքավարական այցելութիւն ըլլալու չէ:

— Պետերսբուրգէն եկած հեռագիրն կծանուցանէ թէ Մոսկովայէն Սեփատապօլ շինուելիք երկաթուղին Լոնդոնի Գանձական Համադգային Ընկերութեանն տրուեցաւ, որոց գործակալ Պ. Հօպ ձեռագրեց պայմանագիրն: Երեսփոխան այս տարի պիտի սկսի:

ՅՐԱՆՍԱ

Ալգերիայի ապստամբութիւնն, որ Մօնիսթօրի եւ Ֆրանսայի բանի մի պարբերական թերթերուն նայելով, օր քան զօր, կնուաղէր, օտար լրագիրներն, ընդհակառակն, կպնդեն թէ բանի կերթայ կծաւալի, եւ բաւական ծանր կոդուստներ անդամ ունենալէն յետոյ, ոչ միայն կտեւէ այլ եւ նորանոր դիմադրութեանց միջոցներ կհայթայթէ եւ շարունակելու երևոյթներ կցցնէ: Ֆրանսա եւս, հոն մինչեւ ցայժմ բաւական զօրք խրկելէն յետոյ, այժմ, կրսեն, երկու ամբողջ զօրաբաժին (զիվիլ զիսն) խրկելու, որպէսզի, եթէ հնար է, շուտով զսպէ:

Նորագոյն տեղեկութիւններն կհաւատտեն թէ ապստամբութիւնն սլատահական եւ յանկարծաւ կան բան չէ. այլ երկար ժամանակէ ի վեր խորհուած, կռուած եւ սնորհնուած, վասն զի ոչ միայն Ալգերիայի ամենահեռաւոր ցեղապետերու մէջ խորհրդակցութեան եւ միաբանութեան յայտնի նշաններ կտեսնուին. այլ եւ այն երկրէն դուրս եղած Ալոր եւ Բարբար տոհմերու հետ, որք ինչպէս զիտցուած է, սաստիկ ազատապէր են եւ հաղիւ գլուխին մահմետական դաւադանի տակ կծուեն, թող թէ Բրիտանիցի:

— Ֆրանսա, Իսպանիոյ գործակցութեամբ, Բօշնիլի տեղութեան դէմ պատերազմ բանալով՝

Հայ Հոռոմեական Գաւառը Էջմիածին, եւ Հայ Էջմիածնական Զմիւռնացի Սարգիս Աղայ Աղա-
բեկեան : Գործը մինչ ցարդ արդիւնաւոր կամ
վերջնական սրտաստան մը լսելի եղած չէ .
թէ որ ասանկ երկար ժամանակ անցնելուն աղէկ
հետեանք պիտի ունենան նէ՝ զէշ չէ . Զէշթուն
իրեն զիրքը փոխած չէ ըստ բաղաբանին ,
ինչպէս առաջ նոյնպէս պիտի :

Կըլենք որ յանձնաժողովին անդամ երկու
քրիստոնեայ Յարգելի թէպէտ արտաքին գործոց
Պաշտօնեայ Ալի փաշային ներկայացան եւ պէտք
եղած հրահանգներն, ստացան ըստ կոչման համե-
մատ . բայց բանտարկելոյ մէջէն մէկ հիւանդին
համար առ ժամանակեայ կերպիւ ազատուելուն
միջամտութիւնը ի դերու ելեր է , վասնզի դորա-
ւոր ծայն չունին եղեր իրենց պաշտօնին մէջ ,
ըստ որում իրենքն համար կարծուած Բ. Գոնէն
տրուած հրահանգէրը կողմնակցութեամբ գրուած
է եղեր առանց երկու քրիստոնէից անունն ան-
գամ նոյն գրին մէջ յիշելու : Երբ խնայան
յիշեալ երկու Հայ քննիչները , որ պիտի չի
կարողանան իրենց նուիրական սրտատաւորու-
թիւնը անթերի կատարել . առանց գանդաղելու
ընկերան բողոքեցին առ Աղգային Վարչութիւնն ,
եւ ասոր վրայ գիտութեամբ Վարչութեան Սրբա-
ղան Պատրիարք Հայրերնիս Ալի փաշային գնաց
ներկայացնելով նոյն քննիչներուն բողոքը , եւ
աղաչելով , որ նա շնորհ ընէ դարձեալ հրաման
մը . թէպէտ հազիւ թէ ըրաւ որ երկու Հայերն ալ
միջամտութիւն ընեն Մարաշի մէջ մեր դատին .
բայց յարեց նաեւ թէ սովորաբար . մեր կողմէն
խրկուած քննիչներուն բայ ի Մահմետականէն
ուրիշ անուն չենք գներ : Տակաւին նոյն հրա-
մանադրը հասած Եային Պէյը իրեն առաջուց
նիւթուած չար խորհրդով թերադրուած կտիպէ
երկու Հայ քննիչ ընկերներուն , որ Զէշթուն
երթալու ընկերակցին իրեն հետ . եւ անոնք ալ
Պոլիսէն իրենց հրամայուածին համեմատ կը յայտ-
նեն թէ անկի Պոլիսէն Բ. Գոնէն հրամանը մինչեւ
Մարաշ էր , եւ ուր տեղ նիստ ընելով Զէշթունի
խնդիրը լուծել , եւ ոչ Զէշթուն երթալ : » Ասոնց
ասանկ մերժումը Եային Պէյը իրեն գաղափարին
համեմատ գտնալով՝ բանի մը ոտիկանով Զէշթուն
կհանապարհորդէ փութանակի . եւ յիշեալ Գաւառ
Էջմիածին եւ Ս. Աղայ Աղաբեկեանը դարձեալ
Պոլիս Վարչութեան իմաց կուտան . եւ պատաս-
խան գնաց որ Եային Պէյըն հետ խոհեմութեամբ
համաձայնին , որովհետեւ պատրիարքարանը փու-
թացուց իրեն կողմանէ հրաման ընել յիշեալ
անձանց համաձայնիլ եւ Զէշթուն երթալ . սակայն
աւիսէն աւելի է՝ մէկ ստորդ տեղեկութեան լուր մը
չկայ . . .

Ուրիշ եւր որ պատիւ ունեցանք Ձեր պերճի-
մաստ Սուրբ Հօր յորինած Երկրագունդը պատ-
ուական պարբերականն ընդունելու , որ աղգիս
յառաջադիմութեան բացաւիտիսն քիչ նեցուկ հան-
դիտանալու չէ հարկաւ : Ի սրտէ կբարեմաղթեմ
յաւերթ յառաջադիմութիւն . եւ անխոչընդոտ ունե-
նալու միշտ շարունակէ յուրախութիւն եւ ի բերի-
րութիւն բնորդ ունեցող ընդունողներուն :

Կաղաչեմ , հաւատացի՛ք Ձեր Սրբութեան մտե-
րիմ որդի :

× × ×

Աղայ Էջմիածնի միայն եւ անդամ՝ Արեւելեան
Պաշտօնութեան գիտնականաց Փարիզոյ՝ եւս եւ

անդամ՝ Խորհրդարանի Լազարեանց ճեմա-
րանին որ ի Մոսկովայ՝ Արժանապատիւ Շահ-
նազարեան Սրբաղան Կարապետ , լուսնոտու եւ
Աստուածաբան վարդապետիդ գտերը աջն
համբուրելով խոնարհութեամբ յայտ առնեմ
ակնածութեամբ , զի

Ընթերցար ի 75 Թիւ Փարիզ լրագրի (1) ձերում
ղոյրալի անցս համաղգեացն մերոց որ ի Մարաշ ,
ընդ նմին եւ զաղէտալի վիճակ այրեայ նոցին եւ
որոց , ոչ կարացար զապել զարտաւուս եւ զհա-
ռաչանս . յոր սակս ինքնակամ յօժարութեամբ
աճապարեալ հանդանակեցար երկու շրջաբերա-
կանոր՝ զոր ի սմա ծրարեմ հանդերձ ստորագրու-
ղայ ցուցակօր . աստ ի Բարձրատան զգումար ինչ
դրամոյ ի Ռանդուն քաղաքիս 160 Ռուբլիս , եւ
յարբայանիստ քաղաքն Մանդլէ 119 Ռուբլիս ,
ընդ ամէնն 279 Կոնականու ռուբլիս , ի նպատ-
կարօտեալ մարց եւ եղբարց եւ քերց մերոց ի
Մարաշ անդր . եւ զոր փութամ զարդիս հասու-
ցանել միջնորդութեամբ Պարոն Թաղէտ Խ. Ավե-
տումի որ ի Կալիթա , առ Վսեմութիւն Ձեր
Բարձրապատիւ՝ սակս առնելոյ զոր ինչ արժանն է
առնել :

Եւ մնամ բազում ակնածութեամբ
Սրբազնութեան Ձերում Ամենա-
խոնարհ եւ Հնազանդ ծառայ Սարգիս
Գ. Մկրտումեան :

Ռանդուն . ի 12 Յէվրէր . 1863 :
Ինդիպ շողենաւան Կալիթա վերնառ :

— 0 —

Առ Պատուելի Հասարակութիւնս Հայոց
Բնակեալ ի Ռանդուն .

Պատուելիք
Փարիզ լրագրոյ 75 Թուոյն մէջ հետեւեալ
Աղգային կարդալով՝ ծանուցանեմ , զի որք
կարեւորանիս օգնականութեանն մասնակից գտա-
նուիլ վասն յիշեալ Մարաշի մեր խղճալի Աղգակից
եղբարց (որք այրիք եւ որք կլինին մեծաւ մասամբ) :
Ուրախութեամբ յանձն կառնում՝ զղումարն ընդ
ստորագրութեան ցուցական հասուցանել առ
մերս Արժանապատիւ Կարապետ Վարդապետ
Շահնազարեանց որ ի Փարիզ : Որոյ վասն այս
ծանուցումն առնեմ՝ յուսալով զի Պատուելի Հա-
սարակութիւնն իւր գթածութեամբ եւ աղգասիրու-
թեամբն յօժարակամ կկատարի :

Մնամ Պատուելի Հասարակութեանս
խոնարհ ծառայ Սարգիս Գ. Մկրտու-
մեան :

Ռանդուն . Նով . 10 . 1862 :

Անունք Ռանդունայ Ստորագրողաց՝ պար-
զորէն գրեալ :

- Տէր Աւետ Աստուածատրեան . . . 12:
- Պարնայր
- Եսայի Մանուկեան 10:
- Կ. Բաղդասարեան 10:
- Աղգակից ոմն 12:

(1) Փարիզի խնայողին մեք լեմք , եւ անպատ-
ուարիսն է մեզ այնպիսի մերկիսատու եւ խայտա-
ռակ քերթի գրիչ չըլալ :

- Բարեկամ ոմն 10:
- Աղգասէր ոմն 5:
- Սէքսիանոս Տէր Գեորգ 5:
- Աղգասէր ոմն 2:
- Ոմն 3:
- Ոմն 3:
- Ոմն 10:
- Յ. Մ. Գ. 3:
- Ս. Գ. Ավգալեան 5:
- Սարգիս Գ. Մկրտումեան 50:
- Տիկնայր
- Աղգուհի ոմն 5:
- Յ. Խաչկեան 10:
- Եղիսա Յ. Յակոբ 2:
- Մի ոմն 1:
- Եղիսաբեթ Գ. Ավգալ 2:
- Բովանդակ գումարն է կոնկրետու
ռուբլիք 160:

Առ Պատուելի Հասարակութիւնս Հայոց
Բնակեալ ի Մանդլէ

Պատուելիք

Փարիզ լրագրոյ 75 Թուոյն մէջ հետեւեալ
աղգային օգտի համար մարդասիրական առաջար-
կութիւնն կարդալով՝ ծանուցանեմ , զի մի՞ ոք
կբարեհաճին նպատաւանորոյց լինիլ վասն յիշեալ
Մարաշի մեր խղճալի համաղգեաց (որք այրիք եւ
որք են մեծաւ մասամբ) . ուրախութեամբ պիտի
յանձն առնում զնուէրն ընդ ստորագրութեան
ցուցական հասուցանել առ մերս Արժանապատիւ
Կարապետ վարդապետ Շահնազարեանց որ ի
Փարիզ : Յուսալով զի Պատուելի Հասարակու-
թիւնն իւր գթութիւն եւ աղգասիրութիւնն յօժա-
րակամ պիտի տարածի իւր ողորպի եղբարց
վերայ :

Իւրաքանչիւր անձի նուէրն կտրեւոր համարիմ
զի հատուցանել պարոն Ներսէս Ե. Մանուկ Պատ-
ուելոյն , յորմէ խնդրեալեմ եւ զի սիրով յանձն
առու լինի հասուցանելով առ իս , զոր հաւատարի եմ
որ ունի կատարել զպատճառեալս նեղութիւնն .
որով հնչեալութիւն պատճառեալ կլինիմ Պատուե-
լեացդ :

Մնամ Պատուելի Հասարակութեան
խոնարհ ծառայ Սարգիս Գ. Մկրտու-
մեան

Ռանդուն . Նով . 10 . 1862 :

Անունք Մանդլէայ Ստորագրողաց՝ պարզորէն
գրեալ :

- Պարնայր
- Թաղէտ Ա. Խաչկեան 20:
- Յ. Ս. Մանուկեան 10:
- Ներսէս Ե. Մանուկ 10:
- Պոլոս Ծաղկազոյն Վարդապետ 2:
- Գրիգոր Ս. Մանուկ 5:
- Տէր Գրիգոր Մահմետի Մ. Գրիգորեանց 5:
- Մ. Գ. Արաւհամեան 50:
- Մանուկ Յ. Ներսէս 5:
- Գրիգոր Ա. Նազարէթեան 2:
- Տիկին
- Մարգարիտ Մ. Տէր Միսա 10:

Բովանդակ գումարն է կոնկրետու Ռուբլիք 119 :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ասկէ տարի մը չափ առաջ Ս. Ստեփաննոս եկեղեցիին առաջ խորանին խաչկալին շինութեան խնդիրը լուծելու նպատակաւ երբ Ս. մենաստանի Սրբազան Հօր նախագահութեամբ ընդհանուր ժողով մը գումարուեցաւ, ժողովականներու հաւանած հաւանութեամբ որոշուեցաւ Մանաթով մը կազմել և խնդրոյն գործադրութիւնը անոր յանձնել :

Անկէ բաւական ժամանակ ետքը Կեդրոնական Վարչութեան կողմէ զրկուած հրահանգին համեմատ Թաղական Խորհուրդս կազմուեցաւ տեղական ազգային գործերու մատակարարութեան սանձը իւր ձեռքը առաւ, և տեսնելով որ՝ Մանաթովին կողմէ ընդունուած յատակագիրը մը համեմատ և հազար երկու հարիւր լիւրացուցանելու թէութեամբ՝ խաչկալին շինութիւնը արդէն սկսեալ և բաւական յառաջացած էր, Սահմանադրութեան 52րդ յօդուածին տրամադրութեանը համեմատ իրեն ազգասիրական պարտքերէն մէկը համարեց գրեթէ լուծման վիճակի մէջ գտնուող Մանաթովին պաշտօնը շարունակել ամենայն աշարժութեամբ և խնայողութեամբ գործը ի կատար հասցնել :

Սակայն Իզմիրի ազգայիններէն 36 արժանաւոր անձինք՝ չգիտենք ինչո՞ւ ցարդ նոյն խաչկալի շինութեան նկատմամբ առարկութիւն մը չընելէն ետք, այսօր առ Թաղական Խորհուրդս զրկուած խնդրագրով մը խաչկալներու շինութեան առօրեայ դադարումը և ընդհանուր ժողովով նոր կարգադրութիւն մը կառավարիչն առարկելով :

Ա. Թէ գործոյն վիճակը և դիրքը չեն ներկայերացնէ Կերպարանքը, ինչպէս որ փափաքեցաւ և որոշեց Երաւիր :

Բ. Թէ այս շինութեան համար միջոցն միայն 1,200 լիւրա ծախք ըրաւ որոշուած էր, հիմա 1,000 լիւրա ծախք եղեր է :

Թաղական Խորհուրդս խնդրագրին արժանաւոր ատորագրողաց այս ազգասիրական նախաձեռնութեան նկատմամբ իւր շնորհակալութեամբ արտայայտելու ժամանակ կը փութայ միանգամայն պարտ ու պատշաճ եղած բացատրութիւնները տալ ոչ թէ միայն խնդրագրին արժանաւոր ստորագրողաց, այլ նաեւ տեղոյս յարգի հասարակութեան, որու կողմէ ընտրուած է ինք և որու միայն համարատու է մինչև գաւառի երեսփոխանական և Քաղաքական Ժողովներու կազմուիլը :

Խաչկալին դիրքը և ձևը չկրնար արգարացի գանգատի մը տեղի տալ բանի որ անոր յատակագիրը Խորհուրդոյ կազմութեան շատ յառաջ ընդհանուր ժողովով կազմուած Մանաթովին մը միջնորդութեամբ աղբովին ընդունուած էր և բանի որ մինչև հիմա նոյն յատակագիրին համեմատ անոր շինութիւնը կը շարունակուի : Զմիւռնիոյ յարգի հասարակութիւնը բաժնի համոզուած է անշուշտ թէ յատակագիրին փոփոխում մը տալը ալ այսուհետեւ անկարելի է առանց մեծ վնասի մը, վասն զի արդէն բաւական ծախք եղած է, և հետեւաբար խնդրագրին առաջին առարկութեան մէջ ոչ արդարացի գանգատ և ոչ ալ շինութեան դադարումի մը հարկը կը նշանուի :

Երկրորդ առարկութիւնը անհիմն տարաձայնութեան մը արձագանգ կերեալ, ըստ որում առաջ խորանի խաչկալին համար ցարդ տեղի ունեցող ծախսը գումարը գրեթէ 60,000 դահեկանի հասած է և ոչ թէ 100,000, և Թաղական Խորհուրդս հիմա իր կողմէ ամեն ազգասիրները թէ այս խաչկալին շինութիւնը արդէն որոշուած 1,200 լիւրան նուազ գումարով մը լրացնելու պիտի յաջողի :

Արժան է հոս յիշել թէ Խորհուրդս տեսնելով թէ իւր կազմութեան յառաջ արդէն սկսեալ էր այս գործը և թէ ինքը Սահմանադրութեան 52րդ յօդուածին համեմատ պարտաւոր էր նաեւ եկեղեցւոյն սլայծառութեանը հսկել և հոգ տանել, ուստի հարկ համարեց՝ արդէն նախապէս աղբովին յայտնուած փախարներու համեմատ շինել տալ նաեւ միւս խորաններու խաչկալները, որոնց յատակագիրը առաջիկայ կիրակէ եկեղեցիին բակը պիտի կախուի, և կը յուսայ ընդ ամենը 2,000 լիւրայով գացել կարենալ թէ՛ առաջ ու թէ՛ միւս խորաններուն շինութեան համար բացուած ծախսը դուրս :

Այս բացատրութիւններէ ետք Թաղական Խորհուրդս ընդհանուր ժողովի մը գումարական կարեւորութիւն չտեսնել, և կը խոստանայ ան ընդհանուր շարունակել իւր ազգային պաշտօնը՝ առանց հանրութեան օգուտը կուսակցութեան ոգւոյն գոհելու, և այսպէս համապատասխանել այն վստահութեան, զոր վայելեց բուհարկութեան ժամանակ :

Ազգային Թաղական Խորհուրդ Զմիւռնիոյ :

Զմիւռնիա . 6 Մայիս 1864 :

ՊԱՏԱՍԽԱՆ

Ընդդէմ Պաշտօնական Յայտարարութեան Թաղական Խորհուրդի Զմիւռնիոյ

Ամոյս 6ին ազգային Թաղական Խորհուրդին կողմէն յայտարարութիւն մի հրատարակուեցաւ ի պատասխանի բողոքադրութեան (1) մի, որով կը խնդրուի որպէսզի ընդհանուր ժողով կազմուի ի քննութիւն Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն խաչկալին շինութեանը, որուն ձևոյն և տարապայման ծախսը ղէմ գանգատներ կը լինեն 2-3 ամիսէ ի վեր :

Յիշեալ յայտարարութեամբ, թէպէտե Թաղական Խորհուրդը կը խոստովանի թէ ազգային ընդհանուր ժողովով Մանաթովին մի կազմուեցաւ ըստ ժամանակին, և խաչկալին շինութեան գործադրութիւնը անոր յանձնուեցաւ, այսու ամենայնիւ կը յաւելու թէ, յիշեալ Մանաթովին լուծման վիճակի մէջ գտնուելով, ինքը ազգասիրական պարտ մի համարեց Մանաթովին յայտնուել շարունակել, և այս իշխանութիւնն ալ Սահմանադրութեան 52րդ յօդուածին ընդունել, կըսէ :

(1) Այս բողոքագրին օրինակը՝ ներկայ պատասխանին վերջը դրածով ի տեղեկութիւն ճշմարիտ ազգասիրաց :

Բայց մեր նոյն յօդուածոյն մէջ չենք տեսնել ամենեւին որ Թաղական Խորհուրդին իշխանութիւն տրուած ըլլայ, ընդհանուր ժողովով կազմուած Մանաթովին կարեւոր պաշտօնը իւր վրայ առնուել, պատճառելով թէ լուծման վիճակի մէջ կը գտնուի : Մեր գիտեմք որ նոյն Մանաթովին հաստատուն կը մնայ . բայց յայտարարութեան գրածին համեմատ ենթադրելով իսկ թէ լուծուած է, Թաղական Խորհուրդին մէջ թէ ազգասիրական, այլ էական պարտքն էր դարձեալ ընդհանուր ժողովին առջև դնել այս կարեւոր խնդիրը և նոր Մանաթովին մի կազմել տալով, խաչկալին շինութիւնը անոր յանձնել, և ինքն ալ հոգարարութիւն ընել : Վասնզի Սահմանադրութեան 52րդ յօդուածոյն մէջ յայտնի դրուած է թէ, Թաղական Խորհուրդին պաշտօնն է թաղին եկեղեցւոյն հոգարարութիւն ընել և անոր պայծառութեանը խնամ տանել, և ոչ թէ ինքնապէս 3000 լիւրայի չափ շինութեան ձեռք դարձնել առանց ազգային ընդհանուր ժողովին դրաւոր հաւանութեանը :

Մեր կը տեսնենք, որ Իզմիրի Թաղական Խորհուրդը իւր ձեռնհասութեան վեր գործոյ մը ձեռք զարկած է . ուստի իւր պարտքն է ընդհանուր ժողովին դիմել այս գործը ի կատար հասցնելու համար . ապա թէ ոչ, ծանր պատասխանատուութեան ներքեւ պիտի անկանի, ըստ ազգային Սահմանադրութեան : որ թոյլ չտար ամենեւին մը և իցէ Խորհուրդ՝ կարեւոր գործոյ մի ձեռք զարնել, առանց վերատեսչութեան : Կաղաչեմք զԹաղական Խորհուրդը, որ ուղարկութեամբ կարգաց Սահմանադրութեան 52րդ և 56րդ յօդուածները :

Գուցէ Թաղական Խորհուրդը գրուցէ մեզ թէ, տակաւին ընդհանուր ժողովը կազմուած չէ, որուն կը պատասխանենք թէ, եթէ տակաւին նոր ընդհանուր ժողով չէ կազմուած, հին ընդհանուր ազգային ժողովը հաստատուն կը մնայ . որ ըստ գաւառական առաջին տնօրէնութեան, վաւերական կը համարուի :

Թաղական Խորհուրդը այս մեր օրինաւոր դիմողութեանը տեղեկի ըլլալով, գրեթէ ամիս մը կայ որ ընդհանուր ժողով գումարելու որոշում տուաւ և իւր դիւանատունը արձանագրուեցաւ նոյն որոշումը : Ինչո՞ւ համար արդեօք ետքէն չուզեց նոյն օրինաւոր և խաղաղասիրական որոշումը ի գործ դնել : Այս հարցմանը չատերը կը պատասխանեն թէ կողմնապահութեան ոգին է պատճառը . քանզի Թաղական Խորհուրդը չէր ուզել որ մէկ բանի պատուաւոր անձինք ներկայ գտնուին ընդհանուր ժողովին : Կարձեալ Թաղական Խորհուրդին համահաճութեամբ, անցեալ չարթու չորս պատուաւոր անձինք հոգաբարձու ընտրուեցան խաչկալին շինութեանը համար . բայց հետեւեալ օրը ինչո՞ւ համար այս տնօրէնութիւնը ի գործ չըրուեցաւ :

Արժան է կը համարիմք նաեւ ծանուցանել, թէ ըստ ժամանակին եղած ընդհանուր ժողովը միայն առաջ խորանին խաչկալին շինութիւնը յանձնեց իւր ընտրած Մանաթովին . իսկ միւս երկու խորանաց շինութիւնը ինչ իշխանութեամբ և ինչ իրաւունքով ինքնազուլ ի գործ կը դնէ Թաղական Խորհուրդը, որ իւր յայտարարութեան գրածին համեմատ, 1,000 լիւրայի գործ մըն է :

Թաղական Խորհուրդը կըսէ, թէ կը յուսայ որ պիտի կարենայ 2,000 լիւրայով երեք խաչկալները :

շինել տալ: Բայց այս յոյսը հիմնաւոր չըլլալը ինքն ալ շատ անգիշ գիտէ: Վաճառի այս շինութեան ճարտարապետը վեց տարուաւոր անձանց առջև դրուեց թէ 2600 լիւայով հազիւ թէ կրնայ լրինեալ: Եւ ճարտարապետի մը 2600 լիւա ըսածը՝ ամեն մարդ գիտէ, որ հազիւ թէ 3600 լիւայի կրնայ շինուիլ:

Այս ամեն գրածներէն կը տեսնուի, որ բոլոր քարկուրս չէմք որ կուգեմք հանրութեան օգուտը կուսակցութեան ոգւոյն զոհելու, ինչպէս որ յայտարարութիւնը կուգէ խնայել: Այլ Թաղական խորհուրդն է որ, զժողովարար, Սահմանադրութեան տրամադրութիւններէն կամուս կը հետեանայ:

Ուստի մեր հատուտաւ մտաւր մեր օրինաւոր ու ազգասիրական պահանջմանը վերայ, կարճը՝ դէմք որ աղջկային Սահմանադրութեան համեմատ՝ հարկ է որ ընդհանուր ժողով գումարուի Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն առաջ խորանին և միւս երկու խորանաց խաչկաշէններուն շինութիւնը բերնելու համար, որպէսզի ետքէն Աղգը ևս առաւել չյաւի եղած տարապայման ծախուցը վերայ:

Իզմիր, 9 Մայիս 1864:

Աղգին օգտից և իրաւանցը
Նախանձախնայիք:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարս նուն ամսոյս 1էն Նիւ Եօրկէն լուրեր բերաւ: Գրանտ Լիի ամուսն զիրեն տեսնելով՝ չըջան ըրաւ և Հանուրը Տառնի մօտ Պամունիի և Հիւսիսային և Հարաւային Աննա գետերն անցաւ: Լի ետ բաշտեցաւ և Ռիմոնդ պաշտարաններու համար Չիկագոյի հարաւային կողմն բանակեց: Ելել (հարաւային) զօրավարի Հիւսիսայիններն երկուքի կտրելու ճիգն չյաջողեցաւ: Գրանտ նորէն յառաջ բաղեց և Ռիմոնդի 7 միլ մօտեցաւ, ուր սաստիկ շփոթութիւն կտրեւ: Եւ ժողովուրդն անձնատուր ըլլալու կամ՝ բաղտըն այրելու վերայ կրկնէ: Բռուրը դեռ Բերմուդա է և շատ յարձակմունք յետո մղեց: Դերման զօրավարն Յոնիստոնին յաղթեց և Ստրանտային կմտեանայ երկաթուղին կտրելու համար:

—Անգլիոյ լրագիրներն մէկ չունչ տարածեցին այսօր սրպէս թէ Նապոլէօն Գ. Ծոնտենըքօ ջուրն ինկեր է, և մէկ նաւակ անոր ազատութեան ամապարելով՝ ծանրապէս վիրաւորեց Ն. Վեհափառութիւնն: Յուսարթ թէ, անհիմն ըլլայ այս չլուկ:

—Պ. Ուշնան «Վարը Յիսուսի» հեղինակն, Կոլեժ դը Ֆրանսի դասաւանդութեան հանդեպաբողորմիլն:

—Ավստրիոյ կայսրն և կայսրուհին Կիստինդն դնային Ռուսաց կայսրն և կայսրուհին տեսնելու համար. անկէ երկու կայսրերն Կարլսրադ երթալու են որ Պրուսիոյ արքան սըջուեն:

—Դանուբեան գործերն կարգի կդրուին: Սուլդանն ընկալաւ Իշխան Կուլա և իր զօրքին հրաման ըրաւ Դանուբէն հետանալ:

—Տրիպոլիի վաւօղի պահարանի բռնկելէն 150 անձինք մեռան. այլ շինուածոց մեծ քանակ չեղաւ:

—Բարձրապատիւ Ֆրուադ Վաչայ Փոխարքայի որդի Նազիմ Բէյն, որ անոր փառաւոր անուան և տոհմի մէկ հատիկ ժառանգ մնացեր էր, անցեալ ներն իր մահկանայն ընթացքն կնքեց ի մեծ ցաւ սրտի իր գլխոտ հօրն և ի մեծ կորուստ Օսմանեան Կայսերութեան, որուն, իր հանձնարումն և ուշիմ գործունէութեամբն, մեծ ծառայութիւն պիտի մատուցանէր: Բոլոր պաշտօնեաներն և անհուն բազմութիւն յուզարկաւոր եղան անոր թաղմանն. յետ որոյ Բարձրապատիւ Փոխարքայի տունն դարձան իրենց ցաւակցութիւնն յայտնելու համար: Վեհափառ Սուլթանն ալ հաճեցաւ իր առաջին սենեկապետ Էմին Բէյի բերնով իր կարեկցութեան զգացումներն յայտնել իր Վսեմախոս Փոխարքային:

—Յունիսի 12ի Միկոնիոյ Դիպոնատիք լրագիրն կհաւատէ թէ. Կոնս Ուշալ խորհրդարար Կոնս Ալիփոնիին հազարեց Գանձարգի Երեսօրխանի իրեն, Յունիսի 2ին, տուած ծանուցագիրն, որով կիմացնէ թէ յիշեալ տէրութիւնն նոյն ամսոյ 12ին թշնամական գործողութիւններն սկսէ պիտի եթէ պատերազմող տէրութիւններն անկէ առաջ միաբանութիւն չընեն: Մի և նոյն ատեն, Կոնս Ուշալ խնայուց անոր թէ Ավստրիոյ նաւատորմն եթէ Բալթիկ ծովն մտնէ՝ Անգլիոյ կառավարութիւնն ալ կհարկադրի իր նաւատորմն նոյնպէս նոյն ջրերն խաւրել: Կոնս Ալիփոնին, կարունակէ Միկոնիոյ Դիպոնատիք, յայտնեց Կոնս Ուշալին թէ ի սէր բանաստեղծեանց և չէզոք տէրութեանց խաղաղութիւն ընելու միաբանեալ ճիգերն ապարդիւն չընելու համար, Ավստրիա, եթէ, զինադադարն չերկնայ, միտք չունի ամենեւին իր նաւատորմն Բալթիկ ծովն խաւրել և այսպէս պատճառ ըլլալ որ Դանձարգի և Գերմանիոյ կուին իր սահմանէն ելլելով Եւրոպայի չորս ան կիւններն հրոյ ճարակ ընէ:

—Յունիսի 10ի Գաղբըղեան (լրագիր) կըսէ թէ. կհաւատեն որ Բարոն վոն Փլեսսին, Պետերբուրգ նստող Դանձարգի դեսպանն, մեկնեցաւ Կոնստանդնուպէս դարձու համար: Նա Ռուսիոյ կողմէն մէկ առաջարկութիւն կրեւ Ելեզիլիգ և Հոլտէյն Դանձարգի հետ վերատին կապելու և այսպէս տէրութեան ամրաշէնութիւնն պոհելու համար:

—Ալգերիայի վերջին լուրերն Ֆրանսայի յաջողութիւններն կիմացնեն: Ապստամբ ցեղերէն ոմանը կցանկան հնազանդութեան դառնալ. այլ խորտակուեցան. և կկարծեն թէ սպառաւորութեան հեղինակն սպանուեցաւ:

ՎՐԻՊԱԿ

Թիւ 13. երես 7. էջ 2. տող 52. «Աղայ Մահ տեսի Յակոբ Գայեան» կարգաւ Աղայ Մահեսի Յակոբ Գայեան:

ԱՌԵՏՐԱԿԱՆ

ԴԻԱՄ. ԿՏԱԻՆԴՆ և ԲԱՄԲԱԿ: Լոնդոն, Մանչեսթըր և Լիւքսմու. 10 Յունիսի:

Անգլիոյ բանին այս շաբթուան հաշին անցեալ շաբթուանին հետ բաղդատելով կտեսնենք որ մեծապէս դրամը գումարն 632 Լ. Ս. սոսիւնէ: Իսկ պահեստի բանքոստաց գումարն

615,025 Լ. Ս. աւելցել է: Այս նշուշտ այս հաշուոյս նայելով բանքին վարկներն կարգաբանային շաշին դինն այս շաբթու 70/0 էն 60/0 ի իջեցեւ: Բայց այս բայլափոխ չընելուն միակ պատճառն Լոնդոնի երեք դրամատեղաց Սպանիոյ կառավարութեան վերջին տուած երկու միլիոն իրա փոխառութեան վճարման համար: Անգլիայէն դուրս սակի ելլելու սկիզբէ: Շաշին գինն այս շաբթու Լոնդոնի սորիտ 63-64 էր. հետեւաբար կտուրի համար բանքին ներկայացեալ թղթոց գումարն խիստ չափաւորեալ էր:

Ուրախութեամբ կըսեմք որ Անգլիոյ բանքին նման Գաղղիոյ բանքն ալ իւր հաշուոյն հրատարակութիւնն շաբթական ընելու կըտրէի, որ մինչև հիմայ ամիսն մի անգամ կհրատարակուի, որով հասարակութիւնն անոր դիրքին վերայ ամսուն մշտեղներ անտեղեակ մնալով անհիմն չոտնջներու կհաւաքայ և շատ անգամ մնաս կրելու կհարկադրի:

Աթոք էքսչէնճի արժողութեանց դիներուն լաւանալու միտումն կտկարանայ Լոնդոնի խորհրդակցութեան տարտամ վիճակին պատճառաւ: Այս շաբթուս նշանակութեան արժանի են Սպանիոյ կառավարութեան փաթիկ և Սերտիֆիկէթ կողմած պարտոց թողութիւնն ինքն, որոնք երկու ամիս առաջ 36 և 13 էին մօտ կարճէին. և այս շաբթուս մինչև 32 և 9 էին ծախուեցան Սպանիոյ կառավարութիւնն ամենց արդարադի պահանջումն ճանաչելու պարկնշտութիւնն չցուցնելուն համար, և Ամերիկայի Միացեալ Նահանգաց արժողութեանց փնտուրին Գերմանիոյ հաշուոյն համար:

Վերջին գիններն հեռագրով այսպէս են. Անգլիա 30/0 907: Ֆրանսա 30/0 67,05: Տաճկաստան 60/0 (1858) 70: Կոնստանդնուպոլիս 48: Ելեզիլիգ 70/0 101: Հնդկաստան 50/0 104: Ռուսիա 50/0 88: Կոնստանդնուպոլիս 70/0 65: Միացեալ Նահանգաց 70/0 55: Օտտոման բանք 19: Կոնստանտնուպոլիս բանք 18:

Լիւքսմուի բամբակի շուկան այս շաբթուս անցեալ շաբթուէն աւելի ուժեղ էր, մանաւանդ Ամերիկայի տեսակներն, որոց քանակութիւնն օր օրի նուազելով, գինն ընին հաստատ պահելէ զատ՝ փնտուրելուն պատճառաւ, լիւքսմուի 1/4 էն 1/2 էր բարձրացան, Բրազիլի տեսակն ծախելու չն աճապարէր. և գինն ընին ուժեղ է, մանաւանդ աղէկ տեսակներն, Ելեզիլիգ տեսակներն ընդհանրապէս կփնտուրին. բայց ծախելու բաղձանք ցցունդներ ըլլալով, մէկ բանի տեսակներ, լիւքսմուի 1/4 է. պակաս կրնայ առնուիլ: Հնդկաստանի տեսակներն ընդհանրապէս ծախելու անձկութիւն ըլլալով, 1/4 և 1/2 է. վար են գիններն. նոյնն կրնայ բաւիլ Չինաստանի տեսակներու համար, միայն այս տարբերութեամբ, որ վերջիններն տարածման համար բաւական ծախուեցան այս շաբթուս: Իզմիրին սակաւ ինչ գումար է ծախել և շատ պարագաներու մէջ 1/4 է. գոհելու է:

Այս շաբթուան ծախքն է 52,860 բալ, որուն 5,730ն տուրքաւոր, 10,820ն դուրսի երկրներն խրկուելու և 36,310ն ներքին ապուսման համար է:

Մանչեսթըրի շուկան հանդարտ է. անցեալ շաբթուան գիններուն վերայ փոփոխութիւն ընելն անտեղի կհամարվի: Կտաւագործաց արդի արտադրութիւնն առետուրի պիտոյքէն աւելի ըլլալով, տեղ տեղ բաւական ապրանք համարն Լիւքսմուի, և հետեւաբար այս գիններով ապրանք պահելու վտանգէն երկնշէնով ծախելու աճապարումն ցուցնող կարգաւորի սակաւ ինչ պակաս գինն ընդունելու. ուստի առետուրի արդի վիճակին մէջ երբ գործողութիւններն միայն անմիջապէս պէտք եղած ապրանքն առնելու մէջ կկայանան, զիւրաւ կերակալը ընթերցողն այսպէս համարին մնացած ապրանքն, թերեւ քանակութեամբ խիստ քիչ, թէ գինն ու վերայ ինչ մնասակար աղբիւրութիւն կընէ: Ուստի չէմք զարմանար որ արդէն կտաւագործաց մէկ մասն կմտած իշենց արտադրութիւնն իջեցնել շաբթին մէկ երկու օր սպասաւ բանելով, և կամ բոլորովին գործարանին գոցելով, որ այն ժամանակ, տեղ եղածէն աւելի ապրանք շուկան չզանուելով գիններն շահաւոր պայմանի մէջ մտնելու առաջնութիւնն դիւրաւ կտոմանան: Միայն դժուարութիւնն այս է, որ մինչև հիմայ թէ մանողներն և թէ կտաւագործներն, Լիւքսմուի միջնորդներու նման, ի միտմին գործելու սովորութիւն չունենալով, այս գին մէկն իր գործարանն բոլորովին գոցելու կհարկադրի, այն դին միւսն վեց օրն ալ կրանի, որով առաջինին ըրած մնաս չափազանց կըլլայ և միանդամայն իր նորատային հասնելու անկարող: Ուստի մանողաց և կտաւագործաց ընկերութիւն կաղմելու զաղախարն արդէն բաւական տարածուած է, որ ամեն պատուաւոր գործարանի տեղ ընկերութեան անդամ դուրսելով, անոր որոշումն ի միտմին գործարանի. և այն ժամանակ ապրանքի արտադրութիւնն շուկայի պիտոյքէն համեմատաբար կարգադրելն կարելի ըլլալով, գինն ալ իրենց արգարայն յարգն չուտով կը գտնեն: Այսօրուան բուրն երեքշաբթուան բուրնն աւելի ապրանք կկնտուէր: Հնդկաստանէն եկած լուրերն գոհացուցիչ չեն. Կալկաթայէն և

